

## ԴՊՅ նվազեցնում է դրույքաչափը

Անդրանիկ Բարսեղյան, «Գլոբալ Էս-Փի-Սի» վերլուծաբան

ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը (ԴՊՅ) բազային տոկոսադրույքը 8 օրում նվազեցրեց 1.25%-ին կետով: Վերջին անգամ նման տեմպերով տոկոսադրույքը իջեցվել է 1982թ.-ին, երբ ԴՊՅ-ն փորձում էր դուրս բերել Ամերիկյան ետպատերազմական շրջանի ամենախորը ռեցեսիայից:

Հայտարարելով 0.5 տոկոսային կետով տոկոսադրույքի հերթական իջեցման մասին, ԴՊՅ-ն պարզ հուշեց, որ տոկոսադրույքը, եթե անհրաժեշտ լինի, կնվազի նաև առաջիկայում: Այն վատ է համաձայնեցվում կենտրոնական բանկի մեկ այլ գլխավոր խնդրի՝ գնաճի դեմ պայքարի հետ: Barclays Capital-ի գնահատականներով գնաճային սպասումները թռիչքային ձևով աճեցին մինչև վերջին մեկ տարվա առավելագույնի մակարդակ՝ տոկոսադրույքի 0.75%-ին կետով առաջին իսկ նվազեցումից հետո:

Ոմանց ուրախացնում է փողային՝ իշխանությունների վճռականությունը ֆինանսական շուկաների ճգնաժամի և հնարավոր ռեցեսիայի դեմ պայքարում: Ոմանց այն վախեցնում է: Դատելով այն համաճանաչից, որ համաշխարհային շուկաները դրական արձագանք ունեցան ԴՊՅ գործողություններին (դեկտեմբերի 31-ին Dow Jones-ը աճեց 1.47%-ով, MSCI World-ը՝ 0,9%-ով)՝ առաջինները մեծամասնություն են կազմում: Սակայն անհանգստությունը աճում է:

Սակայն հոռետեսների ճամբարում միայն նախկին խուճապարար Ջորջ Սորոսը կամ Նուրիել Ռուբինին չեն միայն, որոնք ի դեպ ներկայումս հրճվում են. «Մենք զգուշացնում էինք»: Մոայլ հնչյուններ են ավելի հաճախ հնչում նաև ԴՊՅ նախկին նախագահ Ալան Գրինսպենի ելույթներում: Անցյալ տարի ամռանը նա հայտնում էր վստահություն այն բանում, որ նրա հետևորդը՝ Բեն Բերնանկեն կգտնի ելք իրավիճակից:

Նրա վերջին հարցազրույցը, որը հրապարակվեց գերմանական Die Zeit շաբաթաթերթում, հակադիր այլ երանգներով է լեցուն: Այժմ Գրինսպենը ընդհանրապես կասկածում է, որ կենտրոնական բանկերը ի գործ են արդյունավետ ներգործել իրավիճակի վրա. «Կառավարությունները երբևիցե այսքան թույլ ազդեցություն չեն ունեցել այն ամենի վրա, ինչն աշխատում է աշխարհում: Գլոբալ գործընթացները կարող են ճնշել, մարել դրամական կամ ֆիսկալ քաղաքականությունների ցանկացած միջոցների կարողությունը»:

Գրինսպենի խոսքերում զգացվում էր Բերնակեյի նկատմամբ կարեկցությունը, որը այս դժվարին ժամանակահատվածում ստանձնել է ԴՊՅ ղեկը: ԴՊՅ նախկին ղեկավարը հիշեցրեց, որ աշխարհում միայն երկարաժամկետ պարտատոմսեր թողարկված է \$100 տրլն ավելին: Այս գումարի համեմատ բոլոր կենտրոնական բանկերի հնարավորությունները բնականաբար խամրում են: Ֆինանսական համակարգը բավականին ուրճացվել է և նրան ղեկավարելը հեշտ չէ:

Հավանաբար Գրինսպենի մտահոգությունը օգնում է հասկանալ, թե ինչու Բերնակեն իջեցնում է տոկոսադրույքը այսպես ագրեսիվ կարգով: Մի գուցե նա նույնպես համարում է, որ «փողային» իշխանությունները աննախդեպ թույլ են քան երբևէ, իսկ համաշխարհային ֆինանսական համակարգը ավելի քիչ զգայուն է ԴՊՅ գործողությունների նկատմամբ, քան դա Գրինսպենի ժամանակներում էր: Եվ որպեսզի համաշխարհային ֆինանսները գոնե որոշ ազդեցություն զգան, հավանաբար հիվանդին անհրաժեշտ է ներարկել առավելագույն դեղաբանակը:

